ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

N 92 - Ա

«04» 08 2023թ. ք.Երևան

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և 9.1 հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի N 16-Լ հրամանով հաստատված հավելվածի 17-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման և վիճակագրության վարման պատասխանատու նշանակել Ջրային կոմիտեի արտաքին կապերի բաժնի տեղեկատվական տեխնալոգիաների համակարգող Վարսենիկ Սեդրակի Դավթյանին (Հասցե՝ Քանաքեռ 14 փողոց, 42 շենք, 32 բնակարան, հեռախոս՝ 010 540-592, էլ. փոստ՝ azdarar@scws.am):

2. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման և վիճակագրության վարման պատասխանատու անձի համար սահմանել հետևյալ լրացուցիչ գործառույթները.

1)Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը:

2) Ազդարարման հաղորդումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Ջրային կոմիտեի նախագահին կամ գլխավոր քարտուղարին, իսկ դրանցում կոռուպցիոն բնույթի դեպքեր պարունակելու դեպքում նաև՝ Ջրային կոմիտեի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին:

3) Վարել, իրավական ակտերով սահմանված, ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման էլեկտրոնային կամ թղթային (ըստ նպատակահարմարության) գրանցամատյանը:

4) Ազդարարման հաղորդումների առնչությամբ ձեռնարկել իրավական ակտերով սահմանված պաշտպանության միջոցառումներ, որի արդյունքների մասին զեկուցել վերադասության կարգով: Ազդարարը, պետական կառավարման համակարգի մարմին հանդիսանալու դեպքում, ծանուցել ձեռնարկված միջոցառումների մասին:

5) Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարումը, վերլուծումը, ներկայացումը և հրապարակումը:

3. Ջրային կոմիտեի քարտուղարության պետին՝

1) Սույն հրամանի 1-ին կետում նշված պատասխանատու անձի աշխատանքային պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ավելացնելով սույն հրամանի 2-րդ կետով նշված լրացուցիչ գործառույթները:

4. Ջրային կոմիտեի պաշտոնական կայքը սպասարկող պաշտոնատար անձին՝ հրամանն ընդունվելուց հետո եռօրյա ժամկետում սույն հրամանով նշանակված պատասխանատու անձի կոնտակտային տվյալները տեղադրել Ջրային կոմիտեի պաշտոնական կայքի գլխավոր էջում:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում իրազեկմանը հաջորդող օրվանից:

04.08.2023

X

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN VAHAGN 1812750064

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ